ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

28 հունիս 2024թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան,

անդամներ՝ Լուսինե Նավասարդյան/ԲԱ/, Արմինե Աբրահամյան/ԲԱ/, Նարե Բարսեղյան/ԳԱ/, Հասմիկ Ղոնյան/ԳԱ/,

քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնման ընթացակարգի գնման հայտով նախատեսված գինը ներկայացված է սույն արձանագրության Հավելված 1-ում:

1.2<<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք.

h/h	Մասնակցի անվանումը /անունը/	Էլ. հասցեն
1	Ա/Ձ Միեր Բադիրյան	mher_badiryan@mail.ru
2	<<Շինաշխարհ1>> ՍՊԸ	armshinashkharh@mail.ru
3	<<Վերածնունդ 7>> ՍՊԸ և <<Գոլդ Լայթ>> ՍՊԸ ՀԳ	veracnund7@gmail.com gold-light@bk.ru
4	<<Աժդանակ>> ՍՊԸ	azhdanak@azhdanak.am
5	<<Արայիկ Երկաթ>> ՍՊԸ և <<Վիկարտ>> ՍՊԸ ՀԳ	armen.gasparyan2018@mail.ru eviam.co.vahagn@gmail.com
6	<<Ռենովա Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<Ան-Նար>> ՍՊԸ ՀԳ	renovaconstruction2023.llc@gmail.com an-nar@inbox.ru

1.3Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընդունվել են և սահմանված կարգով բացվել բացող անդամների կողմից, համարվել հետագա գնահատման համար ընդունելի և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ:

1.4Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 2024թ. հուլիսի 3-ին, ժամը 15:00-ին:

2.Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից <<Ռենովա Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<Ան-Նար>> ՍՊԸ Համատեղ գործունեության կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ՝

1. Մասնակցի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում Մասնակցի իրական շահառուների հայտարարագրի հղումը թերի է,

2.Համատեղ գործունեության պայմանագրում

-Մասնակցի կողմից ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը/այսուհետև՝ պայմանագիր/ կողմերի կողմից համապատասխան կարգով հաստատված չէ,

-Պայմանագրի 1.1 կետում ներառված է սխալ շարադրանք՝ <<Ներքին Հանդ բնակավայրի ջրամատակարարման համակարգի կառուցման շինարարական աշխատանքներ>>,

-Պայմանագրի 1.1 կետում կողմերը միավորում են իրենց բոլոր ավանդները համատեղ շահույթ ստանալու նպատակով, որը չի համապատասխանում պայմանագրի հետագա շարադրանքին,

-Պայմանագրի 1.2 կետում անհասկանալի է Գործընկեր 2-ի կողմից լիցենզիայի տրամադրումը՝

Համաձայն <<Լիցեզավորման մասին>> ՀՀ օրենքի, լիցենզիան՝ *լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ*: Ընդ որում լիցենզիայի ներդիրը իրենից ենթադրում է թույլտվություն՝ որակավորում ունեցող համապատասխան մասնագետի միջոցով: Ենթադրվում է, որ մասնագետը նույնպես պետք է ներառված լինի լիցենզիայով պայմանավորված համապատասխան աշխատանքներում, որի մասին պայմանագրում բացակայում է նման պայման,

-Պայմանագրի 1.2 կետում Գործընկեր 1-ի և Գործընկեր 2-ի պարտավորությունների մեջ ներառված է անհասկանալի շարադրանք:

2.1Գնահատող հանձնաժողովը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 1 աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման-գնահատման նիստը և ծանուցել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու անհամապատասխանությունները:

2.2 Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 2024թ. հուլիսի 9-ին, ժամը 15:00-ին:

Ընդունվել է ի գիտություն, որ <<Ռենովա Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<Ան-Նար>> ՍՊԸ Համատեղ գործունեությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, որը համապատասխանում է հրավերի պահանջներին:

2.3Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հետևյալ կերպ.

h/h	Մասնակցի անվանումը	Հրավերով սահմանված նվազագույն պահանջները*	
		Պիտանելիության չափորոշիչ	Ֆինանսական չափորոշիչ
1	Ա/Ձ Միեր Բաղիրյան	Համապատասխանում է	Համապատասխանում է
2	Շինաշխարհ1 ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է
3	Վերածնունդ 7 ՍՊԸ և Գոլդ Լայթ ՍՊԸ ՀԳ	Համապատասխանում է	Համապատասխանում է
4	Աժդանակ ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է
5	Արայիկ Երկաթ ՍՊԸ և Վիկարտ ՍՊԸ ՀԳ	Համապատասխանում է	Չի համապատասխանում**
6	Ռենովա Քոնսթրաքշն ՍՊԸ և Ան-Նար ՍՊԸ ՀԳ	Համապատասխանում է	Համապատասխանում է

*գնահատումը տարածվում է մասնակցի կողմից ներկայացված չափաբաժինների վրա:

**հիմք՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկը որևէ կերպ հաստատված չէ մասնակցի կողմից՝ ստորագրություն, կնիք կամ թվային էլեկտրոնային ստորագրություն:

3.<<ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են ստորև.

/ՀՀ դրամ/

Գնման ընթացակարգի						
ՀՀ	Անվանում	Չափաբաժին /մասնակից	Գնման գին	Արժեք	ԱԱՀ	Գումար
	Աղվանի բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ	1-ին չափաբաժին	72729116			
1		Ա/Ձ Միեր Բադիրյան		47416700	9483340	56900040
2		<<Շինաշխարհ1>> ՍՊԸ		57500000	11500000	69000000
	Սզնակ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ	2-րդ չափաբաժին	215983316			
1		<<Շինաշխարհ1>> ՍՊԸ		166665833	33333167	199999000
2		<<Վերածնունդ 7>> ՍՊԸ և <<Գոլդ Լայթ>> ՍՊԸ		175420000	35084000	210504000
3		<<Աժդանակ>> ՍՊԸ		178319430	35663886	213983316
	Դիցմայրի բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ	3-րդ չափաբաժին	146201373			
1		<<Արայիկ Երկաթ>> ՍՊԸ և <<Վիկարտ>> ՍՊԸ		112696894	22539379	135236273
2		<<Ռենովա Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<Ան-Նար>> ՍՊԸ		113025000	22605000	135630000

4.Ընթացակարգի հրավերի և հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.Գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ չեն ներկայացվել:

6.Հանձնաժողովը որոշեց՝

6.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից՝

Ա/Ձ Միեր Բադիրյան - 1-ին չափաբաժնի մասով,

<<Շինաշխարհ1>> ՍՊԸ – 2-րդ չափաբաժնի մասով,

<<Ռենովա Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<Ան-Նար>> ՍՊԸ ՀԳ – 3-րդ չափաբաժնի մասով

6.2.Մերժել <<Արայիկ Երկաթ>> ՍՊԸ և <<Վիկարտ>> ՍՊԸ ՀԳ կողմից ներկայացված հայտը, հիմք՝ անհամապատասխանություն գնային առաջարկում, գնային առաջարկը որևէ կերպ հաստատված չէ մասնակցի կողմից՝ ստորագրություն, կնիք կամ թվային էլեկտրոնային ստորագրություն (Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017թ. մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետ),

6.3.գնման գործընթացը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների և հայտարարությունների հրապարակումը,

6.4.հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը, սահմանել անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Հ. Ղոնյան

---------- Ն. Բարսեղյան

---------- Ա. Աբրահամյան

---------- Լ. Նավասարդյան

Քարտուղար ---------- Լ. Ավետիսյան